Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 94 (479.25) : 070

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԲՈՍՏՈՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)

Խ. Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: spunews@mail.ru

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը բազմաբովանդակ քննարկման ենթարկեց անկախ պետականության վերականգնման խնդիրը: Թերթը կոչ էր անում վառ պահել անկախության գաղափարը, միավորվել դրա շուրջ և անմնացորդ նվիրվել այդ գաղափարի իրականացմանը: Թերթի էջերում անկախության գաղափարի արծարծումով փաստացի բացահայտվում էր խորհրդային իշխանությունների հանդեպ սփյուռքահայ հանրության ունեցած վերաբերմունքը: Անկախության կողմնակիցները դեմ էին արտահայտվում խորհրդային իշխանություններին: Իսկ խորհրդային իշխանության կողմնակից սփյուռքահայ հատվածը, հանուն խորհրդային իշխանությունների հետ լավ հարաբերություններ ունենալու, քննադատում էր անկախության գաղափարը:

Բանալի բառեր. *Հայաստան, անկախություն, Բոստոն, «Հայրենիք» օրաթերթ, Դաշնակցություն, ռամկավար-ազատական կուսակցություն, խորհրդային իշխանություն:*

Ներկայացված է խմբագրություն 12.05.2017թ.

Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920թթ.) անկումից հետո տարագրության մեջ հաստատված հայ ազգային կուսակցությունները, քաղաքական գործիչները, մտավորականները հասարակական լայն քննարկման առարկա դարձրեցին հայությանը հուզող մի շարք հիմնախնդիրներ: Ամենակարևորը, թերևս, Հայկական հարցի լուծումն էր, Հայաստանի անկախության վերականգնումը: Այս ընթացքում անկախության գաղափարի շուրջն էին տեղի ունենում հայ քաղաքական մտքի շերտավորումն ու բյուրեղացումը: Սա շատ բնական էր, որովհետև անկախության գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված նաև հարցի գործնական լուծումը:

Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի հիմնական ջատագովը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էր, որը ղեկավարել էր առաջին հանրապետությունը: Բոստոնի դաշնակցական «Հայրենիք» օրաթերթը հանգամանորեն քննարկում է Հայաստանի անկախության գաղափարը: Թերթի խմբագրի կարծիքով հայ քաղաքական միտքը պետք է պտտվի «Մայիսի 28-ի առանցքի շուրջը» [1, 1933, 28 մայիսի]:

Այս առումով թերթը հրապարակել է բազմաթիվ խմբագրականներ, հոդվածներ հաղորդումներ:

«Հայրենիք»-ի պատկերացմամբ «անկախ կարող է նկատուիլ ժողովուրդ մը, որ իրաւական ազատութիւն եւ փաստական հնարաւորութիւն ունի ինքն իր միջոցով եւ իր կամքով սեփական կառավարութիւն կազմելու, առանց այդ մասին ոեւէ չափով ենթարկուելու օտար ոյժի մը հարկադրանքին կամ թելադրանքին» [1, 1926, 7 մայիսի]: Թերթը կարևորում է ինքնուրույն և հոժարակամ արտաքին հարաբերություններ մշակելու և դաշինքներ կնքելու ժողովուրդների իրավունքը: Թերթի պատկերացմամբ անկախությունը հայ ժողովրդի՝ սեփական հողի վրա ապրելու, զարգանալու, առաջադիմելու և իր ճակատագիրը ինքնուրույն վարելու անբռնաբարելի իրավունքն է [1, 1929, 1 նոյեմբերի]: Ինչպես տեսնում ենք՝ «Հայրենիք»-ը մեկնաբանում է այն կարևոր հանգամանքները, որոնց առկայությունը ենթադրում է անկախության գոյություն:

«Հայրենիք»-ը գտնում է, որ «Խորհրդային Հայաստանը պետական եւ ազգային տեսակէտով ֆիզիքական պատուանդան մըն է միայն, որ ապագային, աւելի նպաստաւոր պայմաններու տակ կարող է դառնալ եւ պիտի դառնայ հայ ազգային բաղձանքներուն ու գաղափարներուն համապատասխան իրականութիւն մը: Սակայն այդ նպատակին հասնելու համար հայ ժողովուրդը պարտաւոր է պատրաստուիլ» [1, 1931, 28 մայիսի]: Ազգային նպատակների իրականացման համար պետք չէ հրաժարվել անկախության գաղափարից: Ըստ էության՝ դաշնակցական պարբերականի համար, պետք է փայփայել գոյություն ունեցող հայրենիքը և միաժամանակ հարատև ու հետևողական պայքարի նախապատրաստվել հանուն այդ հայրենիքի անկախության:

Խմբագրականներից մեկում եվրոպական բազմաթիվ ժողովուրդների օրինակներ են բերվում, որոնք համառ պայքարի շնորհիվ հասան իրենց անկախությանը: Այս պայքարում ցանկացած նահանջ կամ ուրացում մեծապես կվտանգի նպատակակետին հասնելու ուղին: Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էլ, թերթի մեկնաբանմամբ, այդ վտանգի գիտակցումով, «քայլ առ քայլ, կորովի ու աննահանջ, կը շարունակէ իր պայքարը յանուն Հայաստանի անկախութեան վերանուաճման» [1, 1930, 29 օգոստոսի]: Փաստորեն՝ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, կարևորելով անկախության համար պայքարում անզիջում և հետևողական մոտեցումը, առանձնացնում է այդ պայքարում Հայ Հեղափոխական Դաշնակցության դերակատարությունը:

«Հայրենիք»-ը անկախության ձեռբերման հաջողությունը մեծապես կարևորում է հայ ժողովրդի կամքի հզորացմամբ: «Որքան աւելի հաւատարմութեամբ ու խանդավառութեամբ հայութիւնը ամփոփուի մայիս 28-ի դրօշակին շուրջը, այնքան աւելի շուտ պիտի գայ այդ յաղթանակը»,- գրում է թերթը [1, 1926, 18 յունիսի]: «Հայրենիք»-ը հավատում է, որ Հայաստանի անկախության վերականգնման համար կլինեն բազմաթիվ առիթներ, այլ բան է, որ սերունդները պետք է բավարար իմաստություն ունենան դրանցից օգտվելու [1, 1924, 28 մայիսի]: Թերթը համոզված է, որ «հայ ժողովուրդը, երկուեւկէս տարի ազատ եւ անկախ կեանքի հրաշագործ վայելքն ու միեւնոյն ատեն տառապանքն ունենալէ յետոյ, չի կրնար այլեւս անվրդով կրել ստրկութեան շղթաները եւ պիտի երբեք հանգիստ չառնէ մինչեւ որ նորէն կորսնցուցած ազատութեան չտիրանայ» [1, 1929, 28 մայիսի]: Ինչպես տեսնում ենք՝ սփյուռքահայ պարբերականը հավատով է լցված հայ ժողովրդի իմաստության, ազատամտության և անկախ պետականությունը վերականգնելու կորովի հանդեպ:

«Հայրենիք» օրաթերթն իր խմբագրականներում առանձնակի շեշտադրությամբ է պատասխանում նրանց, ովքեր տարբեր պատճառաբանություններով դեմ են արտահայտվում Հայաստանի անկախությանը: Թերթի խմբագրի համար աններելի սոփեստություն է այն միտքը, թե իբր խորհրդայնացումից հետո Հայաստանը շարունակում է անկախ մնալ, և միայն կառավարությունն է փոխվել: «Քաղաքական հայ իմաստակներ

այսօր ալ կը շարունակեն տակաւին ողորմելի ճիգեր ընել՝ համոզելու հայ ժողովուրդը, թէ Հայաստանի ներկայ վիճակը գոհացուցիչ է ամէն տեսակէտով եւ կը համապատասխանէ հայ ժողովուրդի կենսական շահերուն ու բաղձանքներուն»,- գրում է թերթը [1, 1924, 28 մայիսի]: Մեր կարծիքով՝ Խորհրդային Հայաստանն անկախ պետություն չէր, և այս տեսակետից «Հայրենիք»-ի քննադատությունները տեղին էին:

Թերթը մեղադրում է հնչակյաններին, ռամկավարներին, հայ բոլշևիկներին՝ նրանց մասին գրելով, որ «երէկ ալ, այսօր ալ թշնամի են հայկական ինքնիշխան ոյժի մը, հայկական անկախ պետութեան մը գոյութեան եւ գիտակցաբար թէ անգիտակցաբար կը շարունակեն ծառայել օտար շահերու եւ նպատակներու, բայց ոչ հայ ժողովրդին եւ անոր քաղաքական իտէալներուն, որոնք իրապէս խորթ են մեր հակառակորդներու սրտին, թէեւ երբեմն «սկզբունքով» կ՚ուզեն հայկական անկախութեան բարեկամ ձեւանալ» [1, 1924, 25 յունիսի]: «Հայրենիք»-ի նման կոշտ քննադատության պատճառն այն է, որ վերջիններս «չէն ըմբռներ, թէ մայիս 28-ը միմիայն իրենց հակառակորդ կուսակցութեան տօնը չէ, այլ ամբողջ հայ ժողովրդինը» [1, 1924, 25 յունիսի]: Փաստորեն՝ «Հայրենիք» օրաթերթը փորձում է ցույց տալ, որ սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը Հայաստանի անկախության գաղափարին նայում էր Դաշնակցության հետ իր ունեցած հարաբերությունների պրիզմայով: Իրականում այս մեղադրանքի մեջ ճշմարտության հատիկը մեծ չափաբաժին է կազմում, սակայն դաշնակցական պարբերականը, մեր կարծիքով երբեմն խտացրել է գույները:

«Քաղաքական տհասություն» վերնագրված խմբագրականում անդրադարձ է արվում Կահիրեի «Արև» թերթում ներկայացված ռամկավար գործիչ Հրաչ Երվանդի բանախոսությանը [2, 1925, 2 դեկտեմբերի]: Ըստ թերթի՝ Հ. Երվանդը կարծում է, «որ եթէ Հայաստան այսօր ազատ եւ անկախ պետութիւն մը չէ, ատոր փոխարէն ան ազատուած է իր սահմանները ինք պաշտպանելու եւ հարեւաններու հետ տնտեսապէս մրցելու ծանր հոգսէն» [1, 1925, 3 դեկտեմբերի]: Թերթը թյուրիմացություն է համարում բանախոսի այս միտքը, և տեսակետ հայտնում, որ Խորհրդային Միությունը որևէ երաշխիք չի տալիս Թուրքիայի հարձակման դեպքում Հայաստանը և հայ ժողովրդին չլքելու վերաբերյալ: Համաձայն չենք «Հայրենիք»-ի պնդմանը, թե Խորհրդային Միությունը չէր պաշտպանի Հայաստանի սահմանները: Մեր կարծիքով՝ Խորհրդային Հայաստանի սահմանները ԽՍՀՄ-ը համարում էր իր սահմանները և այդ սահմանների պաշտպանությունն իրականացնում էր իր անվտանգությունից ելնելով: Այլ բան է, որ, ըստ «Հայրենիք»-ի, «հայ ժողովուրդը այսօր ոչ միայն քաղաքական, այլեւ տնտեսական, ոչ միայն զինուորական, այլեւ կրթական գերութեան մէջ է խորհրդային լուծին տակ, իսկ գերութեան մէջ ոչ մէկ ժողովուրդ կարող է ազգայնօրէն զարգանալ ու բարգաւաճիլ:… Հայաստան, ապրելու համար, պէտք է դուրս գայ իր ներկայ խորհրդային գերութենէն եւ դառնայ ազատ եւ անկախ» [1, 1925, 3 դեկտեմբերի]: Կարծում ենք՝ «Հայրենիք» օրաթերթը, նույն կուսակցական անհանդուրժողականությամբ պայմանավորված, այս դեպքում, թերևս իր տեսակետի անքննելի ճշմարիտ լինելու հակումով տարված, չի փորձել զանազանել անկախության բաղադրիչները: Պետք չէր թերագնահատել Խորհրդային Միության դերը Հայաստանի անվտանգության առումով: Այս թերագնահատումով, կարծում ենք խոցելի է դառնում թերթի անկախության քարոզչությունը: Պետք է, կենտրոնանալ ինքնուրույն կրթամշակութային քաղաքական զարգացման վրա, միաժամանակ չթերագնահատելով ԽՍՀՄ-ի դերը անվտանգության առումով: Զուգահեռաբար պետք չէր տուրք տալ հակառակ կողմի ատելությանը, հատկապես որ այդ մասին թերթը մի առիթով գրում է. «ատէլութիւնը դէպի Դաշնակցութիւնը կը կուրացնէ ոչ միայն հայ բոլշեւիկները, այլ նոյն իսկ ազգայնական ռամկավարները այն աստիճան, որ անոնք ընդունակ կը դառնան ժխտելու պատմական աղաղակող իրողութիւնն ալ, զոր կը խորհրդանշէ Մայիս 28-ի ազգային մեծ տօնը» [1, 1932, 28 մայիսի]:

«Հայրենիք»-ի խմբագրականներից մեկում նշվում է, որ խորհրդային կառավարության գովքը անելով ռամկավարները նսեմացնում են անկախության գաղափարը: «Որքան անսահման պէտք է ըլլայ այդ մարդոց մէջ ատելութիւնը դէպի Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ անոնք չքաշուին անդադար փառաբանելու հայ ժողովուրդի նոյնիսկ ամենէն ոխերիմ թշնամիները» [1, 1926, 22 յունուարի]: Ըստ էության՝ «Հայրենիք»-ը գտնում է, որ երբեմն ռամկավարները խորհրդային կառավարության դիրքորոշումը պաշտպանում էին ի հակադրություն Դաշնակցության: Թերթը պարզ ակնարկում է, որ իրենց պատկերացմամաբ ռամկավարների առջև խնդիր է դրված ավելի շուտ պայքարել ընդդեմ Դաշնակցության, քան թե՝ հանուն Հայաստանի: Մեկ այլ տեղ, սակայն, «Հայրենիք»-ը նկատում է, որ ՌԱԿ Գ. Ընդհանուր պատգամավորական ժողովը մի կողմից նվիրական է համարում Հայաստանի անկախության գաղափարը, մյուս կողմից էլ թելադրում է անկախության ձգտող հայությանը «առանձին քաղաքականութիւն չհետապնդել Խորհրդային կառավարութեան հանդէպ» [1, 1926, 4 մայիսի]: Փաստորեն՝ ՌԱԿ-ի համար առաջնայինը խորհրդային կառավարությանը ամեն գնով չնեղացնելն էր, ինչը քննադատության է արժանանում «Հայրենիք»-ի կողմից:

Թերթի խմբագիրը կարծում է նաև, որ Խորհրդային Հայաստանի կարգավիճակը որպես անկախություն ներկայացնելով, այդ տեսակետի կողմնակիցները քողարկում են անկախության դեմ մղվող բացահայտ պայքարը [1, 1926, 28 մայիսի]:

Շարունակաբար պատասխանելով ՌԱԿ մամուլի կողմից Դաշնակցության առաջադրած անկախության գաղափարի քննադատությանը՝ «Հայրենիք»-ը երբեմն ինքն էր նախահարձակ լինում: Օրինակ՝ ՌԱԿ Դ. պատգամավորական ժողովից հետո թերթն անդրադառնում է այդ ժողովի ընդունած հայտարարությանը: Ըստ թերթի՝ «ժողովրդի ծոցին մէջ ապրող քաղաքական կուսակցութեան մը առաջին եւ անփոխարինելի նպատակը պիտի ըլլայ նոյն ժողովրդի քաղաքական անկախութիւնը, որուն պիտի ձգտի իր ամբողջ կարողութեամբ» [1, 1929, 24 հոկտեմբերի]: Թերթի համար տարակուսելի է, որ ռամկավարներն իրենց համարելով ժողովրդական կուսակցություն, ոչինչ չեն ձեռնարկում հանուն ժողովրդի անկախության և վերահաստատում են խորհրդային իշխանությունների հանդեպ լոյալության իրենց դիրքորոշումը: Մեր կարծիքով՝ այստեղ դաշնակցական պարբերականը փորձում է տեսական դաշտում քննադատել ռամկավարների մոտեցումը: Գործնականում սակայն, տեղին չէ ենթադրել, որ իրեն ժողովրդի կուսակցություն համարող ՌԱԿ-ը, անկախությունն առաջնահերթություն չհամարելով, հակադրվում է ժողովրդի ցանկությանը:

Թերթի համար առավել անընդունելի էր այն, որ ընկերային ընկալումներով լինելով կոմունիստական կուսակցությանը գաղափարական հակառակորդ, ռամկավարները այդ կուսակցության դեմ որևէ քայլ չեն ձեռնարկում: «Աշխարհաբար լեզվով այս արարքը կը որակուի ընկերային դաւանանքի ուրացում: Եթէ կուսակցութիւն մը համոզուած է, որ այսինչ վարդապետութեան փորձարկութիւնը կը վնասէ ժողովուրդի մը տնտեսական վերելքին, ան իրաւունք չունի ըսելու, թէ ինք կը հրաժարի անոր դէմ ոեւէ ձեռնարկ ընելու: Ուրիշ բան պիտի ըլլար, եթէ ըսուէր թէ հակառակ ձեռնարկ ընելու ոեւէ հնարաւորութիւն չկայ, քանի որ Հայաստանի մէջ կը տիրէ բոլշեւիկեան տարամերժ միահեծանութիւնը»,- գրում է թերթը [1, 1929, 24 հոկտեմբերի]: Այսպիսով՝ «Հայրենիք» օրաթերթը փորձում է նաև ընկերային դավանաբանական առումով արդարացիորեն քննադատել ռամկավարների խորհրդամետ կեցվածքը: Ռամկավարների դավանած լիբերալիզմը որևէ ընդհանուր առնչություններ չուներ կոմունիստական գաղափարախոսության հետ:

Մի առիթով էլ թերթը հայ ժողովրդի հակաանկախական զանգվածների առկայությունը հեգնանքով պայմանավորում է դարեր շարունակ անկախ պետականություն չունենալու փաստով: «Վեց հարիւր տարուայ ստրկութիւնը անհետեւանք չէ մնացած հայ ժողովրդի համար: Ան առաջ է բերած հայ ժողովրդի որոշ

ըարրերու մէջ այնպիսի խորունկ ստրկական հոգեբանութիւն մը, որմէ անոնք երբեք չեն կրնար ազատիլ»,- գրում է թերթը՝ հայ ժողովրդի մեջ այդպիսի տարրեր համարելով համկավարներին և կոմունիստներին [1, 1929, 24 հոկտեմբերի]:

«Հայրենիք»-ն անդրադառնում է նաև «Հայ-վրացական միություն» ստեղծելու սփյուռքյան նախաձեռնությանը Կահիրեի «Արև» թերթի տված գնահատականներին [3]: «Արև»-ը հեգնում է այդ միությունը նշելով, որ այն նպատակ ունի համատեղ պայքարելու անկախության համար, սակայն, միևնույն է կարիք պիտի ունենա առավել հզոր դաշնակցի: «Հայրենիք»-ը պարզաբանում է, որ անկախ լինելը չի արգելում ինքնապաշտպանության նպատակով դաշնակցել հզոր պետության հետ, սակայն դա պետք չէ, որ լինի անկախության հաշվին: «Հարկաւ Հայաստան պէտք ունի կապուելու Ռուսաստանի նման մեծ պետութեան մը հետ, բայց մի՞թէ այդ պէտք է ընէ անպայման անոր ստրուկն ըլլալու գնով»,- գրում է «Հայրենիք»-ը [1, 1937, 3 մարտի]: Սրանով թերթը ցույց է տալիս, որ դաշինք կազմելը և ստրկական պայմաններով որևէ միության կազմի մեջ մտնելը տարբեր բաներ են: Անդրադառնալով հայ-վրացական միությանը՝ թերթը մատնանշում է. «հարկաւ չի նշանակեր, թէ կովկասեան հարեւաններու բարեկամութիւնը եւ գործակցութիւնը փնտռելով՝ մենք կ'ուզենք անպայման զինուիլ Ռուսաստանի կամ Խորհրդային Միութեան դէմ: Մեր դիրքը Խորհրդային կառավարութեան հանդէպ կը մնայ նոյնը, այն է՝ ոչ թէ զէնքի, այլ գաղափարի պայքար» [1, 1937, 3 մարտի]:

«Հայրենիք»-ի խմբագրականն անդրադառնում է ԱՄՆ-ում հայկական եռագույնի շուրջ ստեղծված իրավիճակին, երբ տեղի հայկական եկեղեցիներում հայ հոգևորականները 1933թ. ապրիլի 24-ին արգելում են ծածանել հայկական եռագույնը: Թերթը գրում է, որ Հայկական եռագույնից հրաժարվելը ենթադրում է հրաժարվել անկախության գաղափարից, և քննադատում է եկեղեցուն և նրան աջակից ռամկավարներին [1, 1937, 3 մարտի]:

Օրինակ՝ Բոստոնի «Պայքար»-ի խմբագիրը ԱՄՆ-ում հայկական եռագույնը արգելելու վերաբերյալ 1933թ. հուլիսի 22-ի համարում գրում է. «Մեր դրօշակը Հայաստանն է, ապրող, աշխատող ու վերածնող Հայաստանը, կենդանի դրօշակ, որ բարձր ու նուիրական է քան ռեւէ լաթեղէն դրօշակ» [4, 1933, 22 յուլիսի]: Այս կապակցությամբ «Հայրենիք»-ի խմբագրականը հետևայալն է պատասխանում. «Ռամկավար թերթը կ'ուզէ այնպէս ներկայացնել ամբողջ ամերիկահայութիւնը ներկայիս յուզող ազգային դրօշակի խնդիրը, որ իբր թէ հայկական Եռագոյնը պաշտպանողները դրօշակը աւելի կը սիրեն քան Հայաստանը, որ իբր թէ մեռած դրօշակի մը համար անոնք կը մոռնան կենդանի Հայաստանը» [1, 1933, 25 յուլիսի]: Իսկապես, ռամկավար պարբերականի հրապարակումը տպավորություն է ստեղծում, թե գերխնդիրը դրոշակն է, և ոչ թե այն, ինչը խորհրդանշում է այդ դրոշակը: Մինչդեռ «Հայրենիք»-ը պարզաբանում է, որ «անոնք, որ կը պաշտպանենԵռագոյնը, դրօշակի լաթը չէ որ կը պաշտպանեն այլ այն մեծ ու նուիրական գաղափարը, զոր կ'արտայայտէ այ լաթը իր գոյներով: Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի գաղափարն է, որ մարմնացած է Եռագոյնին մէջ» [1, 1933, 25 յուլիսի]: Ըստ էության՝ թերթը պարզաբանում է, որ Եռագույնի պաշտամունքը և Հայաստանի պաշտամունքը նույնն են և չեն կարող տարբեր լինել:

«Հայրենիք»-ը 1933 թ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին գրեթե ամենօրյա հրապարակումներով անդրադառնում է եռագույնի խնդրին:

Հիմնականում ռամկավար մամուլի հակաքարոզչության արդյունքում որոշ օտար պարբերականներ հրապարակումներ են անում, թե իբր եռագույնը դաշնակցության դրոշակն է, և դաշնակցականներն այն պարտադրում են նաև եկեղեցուն [1, 1933, 30 օգոստոսի]: Ցավոք, եռագույնի շուրջ ավելի բորբոքվեց միջկուսակցական պայքարը, որն անտեղի վատնում էր սփյուռքահայության ներուժը:

Հետաքրքիր են նաև «Հայրենիք»-ի հոդվածագիրների կողմից անկախության գաղափարի մեկնաբանումները:

Թերթի հոդվածագիրներից մեկը նշում է, որ ինչքան էլ օտար բանակների օգնությամբ հայ ժողովրդի ձեռքից խլած պահեն անկախությունը, ազատության օրն, այնուամենայնիվ, գալու է: Հայաստանի ժողովրդի լռությունը միայն ժամանակավոր է: «Այսօր կը լռէ, ինչպէս լռած էր ամբողջ հինգ դար, սակայն այդ չի նշանակէր, որ ազատութեան տենչը մեռած է իր հոգուն մէջ»,- գրում է թերթը [1, 1924, 30 մայիսի]:

«Հայրենիք»-ի էջերում Հայաստանի անկախությանը նվիրված հրապարակումներով է հանդես գալիս նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը: Նա անկախության 10-ամյանկին նվրված իր հոդվածում գրում է, որ պետք չէ հուսալքվել, այլ՝ մտածել մշակույթի զարգացման, ազգի հզորացման մասին այն ակնկալիքով, որ ազատությունն ու անկախությունն անպայման գալու են: Իսկ դա պայմանավորված է ժողովրդի ունեցած ձգտումով [1, 1928, 28 մայիսի]: Մի քանի տարի անց Ա. Խատիսյանը կրկին անկախության տարեդարձի առիթով գրում է. «… իտէալը մեր հոգիներու խորքը փայփայելու կամ առջեւն աղօթելու համար չէ միայն: Ունենալ իտէալ՝ կը նշանակէ պայքարիլ, պատրաստուիլ այդ իտէալին հասնելու համար: Ահա մեր առջեւ դրուած կարեւոր խնդիրներէն մէկը: Դժբախտաբար, հայ քաղաքական գործիչներէն ոմանք, դրդուած հայ դատի աննպաստ պայմաններէն, ալ չեն հաւատար անկախութեան գաղափարին» [1, 1931, 28 յուլիսի]: Ըստ էության՝ նախկին վարչապետը կոչ է անում վառ պահել անկախության գաղափարը և հավատալ դրա իրականացմանը:

Տարագիր հայ գործիչ Սեպուհը (Արշակ Ներսիսյան) «Հայրենիք»-ի էջերում մեղադրում է ռամկավարներին, որ գովաբանում է բոլշևիկյան իշխանություններին: Նա համոզմունք է հայտնում, որ ռամկավարները դա անում են ոչ թե ի շահ հայ ժողովրդի, այլ՝ ի հակառակ Հ.Յ.Դաշնակցության [1, 1927, 24 ապրիլի]:

Արշամ Խոնդկարյանը համեմատություն անցկացնելով Խորհրդային Հայաստանում և Վրաստանում տեղի ունեցող շինարարական աշխատանքների միջև, փաստում է, որ Հայաստանում այն շատ ցածր մակարդակի վրա է: Պատճառն, ըստ հեղինակի, Խորհրդային Հայաստանի իշխանությունների տկարությունն է, ոչ ազատ լինելը: Իսկ «Հայրենիք»-ի խմբագրականն էլ Ա. Խոնդկարյանի այս հրապարակման վերաբերյալ նշում է, որ վրացիները ցույց են տալիս, որ պատրաստվում են անկախության, իսկ հայ բոլշևիկները՝ ոչ: «Ո՞ր հայ բոլշեւիկն է բոլշեւիկեան դիմակ հագած ազգային նպատակ հետապնդելու համար»,- հռետորական հարց է տալիս խմբագիրը [1, 1929, 10 յունուարի]: Փաստորեն՝ սփյուռքում Հայաստանի անկախության վերականգնման համար կարևորվում է նաև հայ բոլշևիկների ազգայնական տրամադրությունները, ինչից վերջիններս ընդհանուր առմամբ, ցավոք, զուրկ էին:

Կարո Սասունին, անդրադառնալով անկախության տոնին, նշում է, որ այն. «կը դառնայ գեղեցիկ առիթ մը հայ ցրուած ժողովուրդը ազգային հաւաքական կեանքի կոչելու, իրարու միացնելու եւ քաղաքական ազատութեան ըմբռնումով տոգորելու, մէկ խօսքով, ի մի բերելու հայ ազգային քաղաքական մտածումը» [1, 1929, 6 յունիսի]: Իսկապես, անկախության գաղափարը կարող էր հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է համախմբվեին հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Ցավոք, հակառակն էր տեղի ունենում, երբեմն որպես միմյանց հակադրվելու պատճառաբանություն ներկայացվում էր նույն անկախության գաղափարի հանդեպ ունեցած վերաբերմունքը:

«Հայրենիք»-ի հոդվածագիր Հակոբ Ամատունին գրում է. «Ժողովուրդ մը այն ատեն միայն կրնայ իր անկախութեան տիրանալ, երբ այդ ժողովուրդը պետական դաստիարակութիւն ու միօրինակ մտածողութիւն ունի ազգային հարցերու կամ շահերու շուրջ» [1, 1928, 28 մայիսի]: Այսինքն, հեղինակը անկախության գաղափարն ամուր հիմքերի

վրա պահելու համար կարևորում է համապատասխան ճիշտ դաստիարակությունը: Նույն կարծիքն է հայտնում նաև սփյուռքահայ պրոֆեսոր Հակոբ Չագմաքչյանը: «Աշխատինք քաղաքական առողջ դաստիարակութեամբ ստեղծել մեր եւ մեր նորահաս սերունդին մէջ այնպիսի վճռականութիւն մը, որով մեր ցեղը ի վիճակի ըլլայ մեր անկախութիւնը անգամ մը եւս արժեցնել, եւ այս անգամ տեւականօրէն»,- գրում է նա [1, 1927, 28 մայիսի]:

Հայ Գնդունին գրում է, որ անկախության գաղափարը դարերից և պատմությունից ժառանգած գերագույն իմաստություն է: «Անկախութեան գաղափարը մեր հաւատքի հանգանակն ու յեղափոխութեան ուխտն է: Ոչ մէկ զիջում ու սակարկութիւն այս հողի վրայ»,- ահա այսպիսի անզիջում կեցվածք է պարտադրում հայ գործիչը անկախության համար պայքարի գործում [1, 1928, 14 յուլիսի]: Ըստ նրա՝ անկախության գաղափարի վառ պահելով կարելի է «հետզհետէ եւ իրերու պողպատեայ հարկադրանքին տակ մեռցնելու ռամկավարին ու պոլշեւիկին յետին քսութիւնն ու կարմիր քրքիջը» [1, 1928, 14 յուլիսի]: Ըստ էության, առաջարկ է արվում անկախության հարցում որևէ զիջման չգնալ, համառորեն պայքարել այնքան, մինչև բոլոր հակառակորդները տեղի կտան:

Ալեքսանդր Դոնի ստորագրությամբ հայ հեղինակը Հայաստանի անկախության վերականգնման համար առանձնացնում է երեք գործոն ուժերի՝ «մենք, մեր անմիջական հարեւաններ եւ արտաքին աշխարհը» [1, 1929, 19 սեպտեմբերի]: Հոդվածագիրը կարծում է, որ նախ մենք պետք է համառ գտնվենք մեր անկախության վերանվաճման գործում: Անմիջական հարևանների գործոնին անդրադառնալիս ուշադրության է առնում Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի թշնամական վերաբերմունքը դեպի մեր անկախությունը [1, 1929, 19 սեպտեմբերի]: Հեղինակը օտար ուժեր ասելով հատկապես կարևորում է ռուս-անգլիական հակամարտությունից և Թուրքիայի հանդեպ օտար ուժերի վերաբերմունքից օգտվելը [1, 1929, 19 սեպտեմբերի]: Հեղինակը գտնում է, որ ինչպես բոլոր բռնապետությունները, Խորհրդային Միությունը ևս կործանվելու է, քանի որ դրան են ձգտում նրա հպատակ ժողովուրդները: Մեր կարծիքով՝ Ալեքսանդր Դոնին նույնպես կարևորել է գաղափարին հավատալն ու անմնացորդ նվիրվելը, իսկ գաղափարի իրականացման համար միշտ էլ կգտնվեն բարեպատեհ առիթներ ու հնարավորություններ:

Անկախության շուրջ միջկուսակցական բանավեճի հիմնական հարցն այն էր, որ դաշնակցականների պնդմամբ Խորհրդային Հայաստանն անկախ չէ: Նրանց հակառակորդները, մասնավորապես ռամկավարները ճգնում էին համոզել, որ ընդհակառակը, Խորհրդային Հայաստանը անկախ պետություն է: Դաշնակցական գործիչ Արսեն Միքայելյանը «Հայրենիք»-ում պատասխանում է ռամկավար «Պայքար»-ի հոդվածագիր Տիգրան Պոյաճյանին: Ա. Միքայելյանը գրում է, որ Տ. Պոյաճյանի պատկերացումը անկախության վերաբերյալ թերի է: Նա փաստարկում է, որ Հայաստանը զրկված է արտաքին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավունքից և պարտավոր է հետևելու Մոսկվայի ցուցմունքներին: «Հայաստանը, պ. Պոյաճեան, Սովիէթ Ռուսիոյ հարաւային նահանգներէն մին է: Օրէնքները կը թելադրուին Մոսկուայէն, գաղտնի ոստիկանութիւնը ենթակայ է Մոսկուայի Չեկային եւ այլն»,- գրում է Ա. Միքայելյանը [1, 1933, 24 օգոստոսի]: Տիգրան Պոյաճյանն էլ իր հերթին պնդում է, որ որ Հայաստանը որոշ վերապահումներով անկախ պետություն է համարվում: Ըստ ռամկավար գործչի՝ այդ վերապահումներից էին Հայաստանի իշխանությունների ինքնուրույն արտաքին քաղաքանություն վարելու իրավունքից զուրկ լինելը, խոսքի և մամուլի անազատությունը [4, 1933, 31 օգոստոսի]: Մեր կարծիքով, այս վերապահումներն արդեն ենթադրում են անկախություն չունենալու իրողության մասին: Այլ բան է, որ Տ. Պոյաճյանը համոզված է, որ Հայաստանի նման փոքր երկրի համար «դառն զրկանք մը չէ արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունք չունենալը» [4, 1933, 31 օգոստոսի]:

Սփյուռքահայ դոկտոր Ն. Թաշճյանն էլ գրում է. «Ինչպէս անկախութեան համար պայքարիլը, այնպես ալ անկախութեան գաղափարին աւանդապահ ըլլալ շնորհուած է

միայն անկախութեան արժէքն ըմբռնող ընտրեալներուն» [1, 1936, 28 մայիս]: Ըստ էության՝ հայ գիտնականը փորձում է հասկացնել, որ ոչ բոլորը կմիանան անկախության համար պայքարին: Իսկ դա պետք է, որ հուսախաբ չանի պայքարի մասնակիցներին: Անկախության համար պայքարը համարելով միայն ընտրյալների պայքար՝ հեղինակը փաստացի ավելի է ազնվացնում և վեհացնում նույն պայքարի էությունը:

Արդեն նշեցինք, որ 1933 թվականին Նյու Յորքում և ԱՄՆ հայկական եկեղեցիներում հայոց եռագույնի արգելման կապակցության տեղի ունեցան բազմաթիվ բանավեճեր, որոնց ընթացքում ուղղակի և անուղղակի ձևերով քննարկվում էր նաև Հայաստանի անկախության գաղափարը: Բացի «Հայրենիք»-ի խմբագրականներից, որոնց մասին նշեցինք վերևում, խնդրին թերթի էջերում անդրադարձել են նաև մի շարք սփյուռքահայ գործիչներ:

Սեդրակ Գրիգորյանը «Ռամկավարները և եռագույնը» վերնագրված հոդվածում փորձում է ցույց տալ, որ ռամկավարների քայլերը առավելապես պայմանավորված են դաշնակցության դեմ ունեցած թշնամական վերաբերմունքով, այլ ոչ թե՝ եռագույնի խնդրով: «Հետեւեցէք կարճ ատեն մը Ռամկավար թերթերուն եւ պիտի տեսնէք, որ էապէս շատ քիչ տարբերութիւն կայ անոնց եւ թուրք թերթերու ըսածներուն միջեւ: Ցաճախ անոնք Դաշնակցութեան դէմ ունեցած անսահման ատելութենէն մոլեգնած՝ Էնկիւրիի թուրքերէն աւելի զօրաւոր հակահայ յօդուածներ ու խմբագրականներ կը գրեն»,- գրում է հոդվածագիրը [1, 1933, 1 օգոստոսի]: Մ. Օզանյանն իր հոդվածում՝ «Հայ ռամկավարները եւ մեր դրօշակը», մեղադրում է ռամկավարներին բոլշևիկներին ծառայելու և եռագույն դրոշի դեմ պայքար մղելու համար [1, 1933, 24 օգոստոսի]: Ինչպես տեսնում ենք՝ եռագույնի գաղափարը հայ գործիչները նույնպես նույնացնում են անկախության գաղափարի հետ: Ցանկացած անարգալից վերաբերմունք եռագույնին այս գործիչների կողմից ընկալվում էր որպես անարգանք անկախության գաղափարի հանդեպ:

«Հայրենիք»-ը պարբերաբար անդրադարձել է նաև աշխարհի տարբեր վայրերում անկախությանը նվիրված միջոցառումներին և դրանց ընթացում հնչած մտքերին:

Օրինակ՝ տարագիր Արտաշես Աբեղյանը Հայաստանի անկախությանը նվիրված Բեռլինում կազմակերպված երեկույթի ժամանակ ասում է. «Տարակոյս չունենանք, որ այսօր էլ Հայոց Աշխարհի քաղաքացին եւ գիւղացին, աշխատաւորն ու մտաւորականը, որչափ եւ կաշկանդուած ու կծկուած, իրենց հոգու խորքերում, իրենց սրտի ծալքերում, իրենց հարազատներով շրջապատուած, իրենց գորշ խրճիթների տակ մայիս 28-ի նուիրական տօնն են սրբազնագործում, իրենց ողջ էութեամբ ազատ ու անկախ կեանքը վերապրում, նրան վերանուաճելու ուխտը երդնում» [1, 1923, 30 յունիսի]:

Թերթը ներկայացնում է նաև տարագիր Նիկոլ Աղբալյանի բանախոսությունը Ալեքսանդրիայում տեղի ունեցած անկախության 6-ամյակի հանդիսությանը: Այստեղ օրվա բանախոսը կոչ է նաում համբերությամբ տանել նրանց, ովքեր ժխտում են մայիսի 28-ը: Դա ժամանակավոր է, և հեռու չէ այն օրը, երբ մայիսի 28-ը դառնալու է համազգային տոն [1, 1924, 29 յունիսի]: Ն. Աղբալյանը Եգիպտոսում նման բովանդակությամբ ճառ է արտասանում նաև հաջորդ տարի տեղի ունեցած անկախության տոնահանդեսին [1, 1925, 30 յունիսի]:

Հետաքրքիր է նաև Նյու Յորքում Հայաստանի անկախության 7-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ հնչեցված Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ Վահան Գարտաշյանի ճառը: Բանախոսը Հայաստանի անկախության, որպես բարձրագույն իդեալի վերանվաճման հաջողությունը պայմանավորում է մեր միասնականությամբ և զոհաբերելու, զոհողության գնալու պատրաստակամությամբ [1, 1925, 28 յունիսի]: Այստեղ Գարտաշյանը ակնարկում է նաև դրամահավաքը: Ի դեպ Կոմիտեն ծավալուն աշխատանքներ էր կատարում ԱՄՆ-ում, որ վերջինս ԽՍՀՄ-ի հետ որևէ համաձայնության գալու պայման ներկայացնի նաև Խորհրդային Ռուսաստանի

կողմից «Միացեալ եւ Անկախ Հայաստանի ճանաչումը» [1, 1925, 30 յունիսի]: Հետաքրքիր է, որ «Հայրենիք»-ն անդրադառնում է նաև նմանատիպ մեկ այլ փաստի: Թերթը նկարագրում է Բելգիայի խորհրդարանի մի նիստ, որտեղ. «պատասխանելով երեսփոխան պ. Պրիւնոֆի, որ պահանջած է անմիջապէս ճանչնալ Սովիեթները, Պելճիքայի Արտաքին Գործոց նախարար Վանտերվելդ յայտարարած է, թէ իր կառավարութիւնը, իբրեւ նախապայման Սովիեթներու ճանաչման, անոնցմէ կպահանջէ նաեւ Հայաստանի եւ Վրաստանի անկախութեան ճանաչումը, երկիրներ, որոնց հետ Պելճիքա լաւագոյն յարաբերութեանց մէջ է արդէն» [1, 1925, 5 օգոստոսի]:

Հատկանշական է, որ «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունը ևս Հայաստանի անկախության հասնելու հույսեր է կապում ԱՄՆ-ի կողմից Խորհրդային Միության հնարավոր ճանաչման հետ: «Այն պարագային, երբ Միացեալ Նահանգները որոշեն ճանաչել ԽՍՀՄ-ը, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն պետք է ջանքեր գործադրի, որ այն կատարվի Հայաստանի անկախությունը ճանաչելու պատշաճ վերապահումով, այնպես, ինչպես դա արեցին Անգլիան և Ֆրանսիան» [1, 1928, 6 սեպտեմբերի]: Ինչպէս հայտնի է Անգլիան և Ֆրանսիան Խորհրդային կառավարությունը ճանաչեցին Ցարական Ռուսաստանի այն հողերի վրա, որոնց ժողովուրդները ճանաչել են Խորհրդային կառավարությունը, որը Անգլիային և Ֆրանսիային հնարավորություն է տալիս ԽՍՀՄ-ի մեջ մտած ժողովուրդներից որևէ մեկի ապստամբության դեպքում ճանաչել այդ ժողովրդի անկախությունը [1, 1928, 6 սեպտեմբերի]: Մեր կարծիքով սական, ինչպես ցույց տվեց նաև դեպքերի ընթացքը, ԱՄՆ-ը նման քայլի չէր գնա: Իրականում մենք մեզ հույսեր էինք վերագրել: Պատահական չէ թերթի հաջորդ խմբագրական հոդվածը, ուր նշվում է, որ, եթե հանկարծ ԱՄՆ-ը ճանաչի Խորհրդային Միությունը առանց Հայաստանի անկախության մասին վերապահումով, պետք չէ հիասթափվել: Ընդհակառակը պայքարը հանուն անկախության պետք է շարունակել նոր թափով [1, 1928, 7 սեպտեմբերի]:

Այսպիսով, վերլուծելով Հայաստանի անկախության գաղափարի շուրջ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի էջերում ընթացող քննարկումները, կարելի է եզրակացնել.

- Թերթի կողմից որևէ տարակուսանք չի եղել վառ պահել Հայաստանի անկախության գաղափարը և անվերապահ հավատով, միասնականությամբ և զորաբերության գնալու պատրաստակամությամբ նվիրվել դրա իրականացմանը:
- Դաշնակցական պարբերականի կարծիքով անհրաժեշտություն էր փայփայել գոյություն ունեցող հայերիքի փոքրիկ հատվածը՝ իբրև հենարան ապագա անկախ և միացյալ Հայաստանի:
- Օրաթերթի կարծիքով անկախության գաղափարը կարող էր հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է համախմբվեին հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Ցավոք, երբեմն հակառակն էր տեղի ունենում, և որպես միմյանց հակադրվելու պատճառաբանություն ներկայացվում էր նույն անկախության գաղափարի հանդեպ ունեցած հակասական վերաբերմունքը:
- Օրաթերթը անկախության համար մղվող անզիջում և հետևողական գաղափարական պայքարում առանձնացնում է Հայ Հեղափոխական Դաշնակցության դերակատարությունը:
- Թերթը, երբեմն չափազանցեցված, փորձում է ցույց տալ, որ սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը Հայաստանի անկախության գաղափարին նայում էր Դաշնակցության հետ իր ունեցած հարաբերությունների դիտանկյունից:
- Օրաթերթը քննադատում է սփյուռքում գոյություն ունեցող այն տեսակետը, թե իբր Խորհրդային Հայաստանն անկախ պետություն է: Թերթի կարծիքով իրականում այս կերպ փորձ է արվում քողարկել անկախության դեմ մղվող բացահայտ պայքարը:

- Թերթը սփյուռքում Հայաստանի անկախության վերականգնման համար կարևորում է նաև Հայաստանի բոլշևիկ ղեկավարների ազգայնական տրամադրությունները, ինչից վերջիններս ընդհանուր առմամբ, ցավոք, զուրկ էին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայրենիք», Պոսթըն:
2. «Արև», Գահիրէ:
3. Ստեփանյան Խ., Հայ-վրացական միության ստեղծման փորձ (1936թ.), «Բանբեր Հայաստանի Արխիվների», Երևան, 2009, թիվ 2 (114), էջ 204-208:
4. «Պայքար», Պոսթըն:

РЕЗЮМЕ
ОБСУЖДЕНИЕ ИДЕИ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ В БОСТОНСКОЙ ГАЗЕТЕ «АЙРЕНИК» (1920-1930 ГГ.)

Х. Р. СТЕПАНЯН

После установления советской власти в Армении Бостонская газета «Айреник» (Родина) содержательного обсуждал вопрос восстановления независимой государственности. Газета призвала поддерживать идею независимости, объединиться вокруг нее и полностью посвящаться этой идее. В страницах газеты обсуждая идею независимости на самом деле раскрывался отношение общественности армянской диаспоры к советской власти. Сторонники независимости были против советской власти. А просоветская часть диаспоры, ради хороших отношений с советской властью, критиковала идею независимости.

SUMMARY
DISCUSSION OF THE IDEA OF INDEPENDENCE OF ARMENIA IN THE BOSTON'S NEWSPAPER "HAYRENIK" (1920-1930-IES)

KH. R. STEPANYAN

After the establishment of Soviet power in Armenia the Bsoton's newspaper "Hayrenik" (Homeland) discussed comprehensively the issue of restoration of independent statehood. The newspaper urged to keep alive the idea of independence, unite around it and entirely dedicate to this idea. Developing the idea of independence the newspaper actually revealed the attitude of the public towards of teh Armemnian Diaspora to the Soviet authorities. The supporters of independence were against the Soviet authorities. The part of Armenian Diaspora, which was in favor of Soviet power, for the sake of good relations with the Soviet authorities, criticized the idea of independence.